բարեհաճելի էր ինձ։ Բարեհաճեցի և մեր մէջ մի խօսակցութիւն բացվեց՝ որ տևեց ամբողջ երեք ժամ։

Ես մտադիր չեմ ամբողջը մէջ բերել՝ այլ կը յիշեմ նորա նշանաւոր կէտերից մի քանիսը միայն։

«Ի՞նչպէս գտաք մեր աշխարհը» հարցրեց խանը։

—«Հատ վատ»—պատասխանեցի։ Այս եօթերորդ օրն է՝ որ ես պտտումեմ այս կողմերը և օր չ'եղաւ՝ որ իմ շրջապատիցը հափշտակութիւնների՝ սպանութիւնների լուրեր չը լսվէին։ Հարամլումը մեծ ճանապարհի վերայ՝ սպանել են երկու Բաղիշեցի վաճառականներին և տարել են նորանցից երկու հազար օսմանեան ոսկի։ Դանաբուլախում սպանեցին եօթ թաթարների և տարան նորանց իւղի բեռները։ Արաբ լեար և Մարգեան գիւղերի մէջ կողոպտեցին Սալմաստեցի մշակներին։ Գարաղիադղինի և Խոյա մէջ թալանեցին վաճառականներին։ Աղբուլաղի տաւարները և ոչխարները հափշտակեցին։ Քիշմիշ Թափի եզները քշեցին՝ բայց գիւղացիները վրայ հասնելով կռիւ բացուեց և չորս մարդ են վիրաւորել։ Համզա աղէն էլ դեռ նոր է վերադարձել. նա էլ իւր գործերը կսկսի*)

*) Ծանօթ. Ես Ալաջուղումն էի երբ լուր տարածուեց թէ Համզա աղէն իւր Տաճկա—Հայաստանում արած